

Ս. ԱԿԿԵՐՄԱՆ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ ԱՌՈՂՋ ՄԱՐՏԻԿՆԵՐ

(Հուշարձեր գորակոչիկի առողջուրյան մասին)

355.2

Ա-38

ՊԵՏՏՐԱՏ

1938

ՅԵՐԵՎԱՆ


355.2

613.64

1 MAR 2010

14-38

Ս. ԱԿԿԵՐՄԱՆ



ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ
ԱՌՈՂՋ ՄԱՐՏԻԿՆԵՐ

(Հուշարձանի գործակալի առողջության մասին)

ՊԵՏՏՐԱՏ

1938

ՅԵՐԵՎԱՆ

Թ. Երգմ. Աղ. Շաթիրյան
Պատ. խմբագիր՝ Բ. Գուրինյան
Հեղվական խմբագիր՝ Հաբ. Պետրոսյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբազրիչ՝ Մ. Մարտիկյան
Գնտրող սրբ. Ս. Շահբազյան



42947-63

Գլխավոր լրագրող Ղ-3617 Հրատ. № 4571
Պատվեր 338 Տիրած 3000.
Թուղթ 72×105 Տպարդ 13/10 մամ.
Մեկ մամ. 25.600 նշան. Հեղինակ. 2/5 մամ.
Հանձնված և արտադրություն 27 III 1938 թ.
Ստորագրված և տպագրություն համար՝ 20 IV 1938 թ.

«Զինվորական ծառայությունը Բանվորա-
Գյուղացիական Կարմիր Բանակում ԽՍՀՄ-ի
քաղաքացիներին պատվավոր պարտականու-
թյունն է»:
(ԽՍՀՄ-ի Սահմանադրության 132-րդ հոդվա-
ծից):

Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակին—
խորհրդային սահմանների պահակին—հարկավոր
են քաղաքականապես պատրաստված, ֆիզիկապես
ամրակազմ, կոփված ու զինացված մարտիկներ:

Յերիտասարդ կարմիր բանակայինները, վորոնք
կատարում են սոցիալիստական հայրենիքի պաշտ-
պանությունը պատրաստվելու պատվավոր պար-
տականությունը, պետք է ունենան լավ առող-
ջություն, ամուր նյարդեր և յերկաթյա միաններ:

Ռազմական գործիչները և
ռազմական տեխնիկայի յուրացումը պահանջում
են լավ զարգացած առողջություն:

Այդ պատճառով 19 տարեկան դարձած և
ԲԳԿԲ-ի շարքերը կանչվող բոլոր քաղաքացիները
մանրազնին բժշկական քննություն են յենթարկ-
վում զորակոչային կայաններում:

Վորպեսզի զորակոչային հանձնաժողովը զորա-

կոչելին պիտանի համարի գինվորական ծառայության/համար, զորակոչիլը պետք է լինի միանշանակ առողջ, ամբակազմ, առանց ֆիզիկական պակասությունների:

Յուրաքանչյուր զորակոչիկ, վորք պատրաստվում է Խորհրդային հայրենիք պաշտպանելու համար, մինչեւ զորակոչը մրցապես պեժ է հոգ տանի իւր առողջության մասին:

ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Կարմիր Բանակը հերթական զորակոչի ժամանակ առողջ համալրվումով ապահովելու նպատակով, զորակոչի տարիք ունեցող բոլոր աշխատավորները զորակոչից մեկ տարի առաջ յենթարկվում են նախնական բժշկական քննության:

Այդ քննության ժամանակ վարչություն է զորակոչիկի առողջության վիճակը:

Թուլացած, վոչ բավականաչափ կոփված կամ հիվանդություն ունեցող զորակոչիկները, վորոնց կարելի չի կատարելապես բուժել, վիրջվում են բժշկական հաշվառման: Այդ զորակոչիկներին ցուցումներ են տալիս, թե ինչպես պետք է ամ-

րապնդել առողջությունը և ամբողջ ժամանակ, մինչև զորակոչը, նրանք սխտեմատիկորեն բուժվում են: Հիվանդ զորակոչիկները ձրի դեղեր ու բուժում են ստանում տեղական հիվանդանոցներում կամ բուժարաններում:

Յեթե բժշկական հանձնաժողովի բժիշկները չեն կարողանում միանգամից վորոշել, թե ինչ հիվանդություն ունի զորակոչիկը, հետազոտելու համար նրան ուղարկում են մասնագիտական բուժ. հիմնարկների մասնագետ բժիշկների մոտ:

Այդ հիմնարկություններում ճշտորեն վորոշում են զորակոչիկի հիվանդության բնույթը և նշանակում անհրաժեշտ բուժումը:

Զորակոչիկների նախնական բժշկական քննության և նրանց բուժման վրա հսկայական ուժեր ու միջոցներ են ծախսվում: Բայց այդ աշխատանքն անհրաժեշտ է, վորովհետեւ նա մեր Կարմիր Բանակն ապահովում է առողջ ու ամբակազմ համալրվումով:

Առողջ, դիմացկուն և քաղաքականապես դարձացած մարտիկները հեշտությամբ են յուրացնում ռազմական տեխնիկան և անպարտելի դարձնում մեր սիրելի Կարմիր Բանակը—խաղաղության այդ վստահելի պատվարը:

Յուրաքանչյուր զորակոչիկ — Խորհրդային Միության գիտակից քաղաքացի — պետք է ներկայանա նախնական բժշկական քննության, նոսրությամբ ու սխտեմասիկոսեն կաթարի բժիշկների բոլոր ցուցումները, այն է՝ կանոնավոր բուժվել ու ամրապնդել իր առողջությունը:

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ՄԻՆՁԵՎ ԶՈՐԱԿՈՉ

Զինվորական ծառայության բոլոր պահանջները կատարելու, ռազմական տեխնիկան ել ավելի հեշտությամբ ու հաջողությամբ յուրացնելու, մարտական պատրաստության պլաններն ստանձնողական ձևով կատարելու համար պետք է լինել վստիճակի միայն առողջ, այլ և լավ կոփված, զիմացկուն ու ամբակալմ: Այդ պատճառով զորակոչիկը սանիտարական-հիգիենիկ կանոնները մշտապես պետք է պահպանի թե կենցաղում և թե աշխատանքի մեջ, պաշտպանի իրեն հիվանդություններից, դարդացների իր ուժերը և կոփի իրեն ֆիզիկական կուլտուրայով:

ՊԱՊ-ի նորմաները տալու մարզանքը սքանչելի միջոց է առողջությունն ամրապնդելու և դարդացնելու համար:

Պաշտպանության յերկաթյա ժողովում Խորհրդային Միության մարշալ ընկ. Վորոշիլովն ասել է.

«Մոցիալիստական կուլտուրան և ԲԳԿՄ-ի մարտիկների ու պետկազմի կուլտուրականությունը հանդիսանում են կարեորագույն պայմաններն ու նախապայմանները Բանվոր-Գյուղացիական Կարմիր Բանակի մարտական, քաղաքական և մասնագիտական ռազմա-տեխնիկական պատրաստության հեղափոխական համար»: (Ընկ. Վորոշիլովի ճառից, 1934 թ. հունվարի 30-ին, Համ Կ (բ) Կ XVII համագումարում):

Այս նշանակում է, վոր յուրաքանչյուր զորակոչիկ մինչև զորակոչը պետք է անդադար աշխատի իր կուլտուրական մակարդակը բարձրացնելու վրա, պետք է զառնա ընդհանուր և սանիտարական կուլտուրայի ակտիվ հաղորդիչը աշխատավորական լայն մասսաներին:

Զորակոչիկը պետք է մաքրության ու մաքրապիւրության որինակ լինի և հարվածային՝ իր զործարանը, կուլտուրականությունը, բնակարանն առողջացնելու աշխատանքներում:

Զորակոչիկը պարտավոր է.

1) հետևել իր մարմնի առողջությանը. ամեն առավոտ սալոնով խնամքով լվանալ զեմքը, վիզը,

ականջները, ձեռքերը, և առավոտներն ու քնն-
լուց առաջ մաքրել ատամները.

2) վոչ ուշ քան 10 որը մեկ անգամ լողանալ
բաղանիքում անպայման սապոնով, ինչպես նաև
հաճախ փոխել տակի սպիտակեղենը (փոխնորգ-
ները).

3) կարճ կտրել յեղունդները.

4) ձեռքերը լվանալ կեղտոտ աշխատանքից հե-
տո և ամեն անգամ ուտելուց առաջ.

5) միայն առանձին յերեսաբլիճ զործածել,
թաշկինակ ունենալ և այն որինակելի մաքուր
պահել.

6) որինակելի մաքուր պահել իր բնակարանը,
սիստեմատիկորեն ողափոխել, խնամքով մաքրել —
հավաքել.

7) անկողնու պարագաները և հագուստը վոր-
քան կարելի յե հաճախ թափ տալ բաց ողում.

8) կանոնավոր պարապել ֆիզիկուլտուրայով,
տալ ՊՍՊ-ի նորմաները, սպորտխմբակի ակտիվ
անդամը լինել.

9) բարձրացնել իր սանիտարական զրադիտու-
թյունը և ակտիվորեն պատրաստվել ՊՍՊ-ի
(Պատրաստ Սանիտարական պաշտպանության)
նորմաները տալու.

10) հիվանդանայու ղեպքում անմիջապես դի-
մել բժշկին, կատարել բժշկի նշանակածը և անու-
շադրության չմատնել հիվանդությունը.

11) սանիտարական-հիգիենիկ գիտելիքներն
ակտիվորեն տարածել աշխատավորական լայն
մասսաների մեջ.

12) աշխատել կենցաղի և աշխատանքի պայ-
մաններն առողջացնելու վրա, պայքարել կուլ-
տուրայի համար:

Զորակոչիկի սանիտարական կուլտուրակա-
նությունը վստահելի միջոց է առողջու-
թյունն ամրապնդելու յեվ Բանվորա-Փյու-
ղացիական Կարմիր Բանակի պատասխա-
նատու յեվ պատվավոր ծառայությանը
պատրաստվելու համար:

ԲԺՇԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ
ԿԱՅԱՆՈՒՄ

Կարմիր Բանակի՝ երթական զորակոչներին ժամա-
նակ բոլոր զորակոչվողները հատուկ քննություն
են յենթարկվում զորակոչային հանձնաժողովում:

Այդ հանձնաժողովում մասնագետ բժիշկները
նորից բազմակողմանի հետազոտման են յենթար-
կում զորակոչիկի առողջության վիճակը: Զորա-

կոչային հանձնաժողովը չպետք է թույլ տա բանակ մտնելու այն զորակոչիկներին, վորոնք իրենց առողջության վիճակով պիտանի չեն գինվորական ծառայության, համար, ինչպես նաև բանակում ծառայելու պատվից չպետք է զրկի նրանց, ովքեր իրենց առողջությամբ կարող են լավ կատարել գինվորական աշխատանքը:

Զորակոչային հանձնաժողովին ներկայանալուց առաջ զորակոչիկը պետք է սապոնով լավ լողանա բազանիքում, հագնի մաքուր սպիտակեղեն, կարճ սափրել տա մազերը և ամելվի:

Զորակոչային հանձնաժողովում բժիշկների կաբինետը կանչվելուց հետո զորակոչիկը պետք է բոլորովին մերկանա, վորից հետո միայն սկսվում է բժշկական քննությունը:

Հանձնաժողովում չափում են զորակոչիկի հասակը, քաշը, վորոշում են կրծքավտնդակի շրջագիծը, կատարում են ընդհանուր քննություն, հետազոտում են սիրտը, թոքերը, նյարդային սիստեմը, նեքրին որդանների զրությունը, տեսողությունը և լսողությունը:

Բայց նույնիսկ այդպիսի մանրակրկիտ հետազոտման զեպքում ել հանձնաժողովի բժիշկները ամեն անգամ չեն կարող վերջնական յեզրակա-

ցություն տալ զորակոչիկի առողջության մասին: Դրա համար յուրաքանչյուր զորակոչիկ պետք է ոգնի բժիշկներին իրենց աշխատանքում: Նա պարտավոր է ճշմարտորեն ու մանրամասնորեն պատմել բժիշկներին այն մասին, թե ինչ հիվանդություններ է տարել նա մինչև զորակոչը, վորտեղ է յերբ է բուժվել և ինչ հիվանդություններից, ինչպես է նա զգացել իրեն վերջին ժամանակները, ինչպես է զգում այժմ, ինչից է զանգատվում:

Բոլոր զորակոչիկներն ել յենթարկվում են լիակատար բժշկական քննության, անկախ այն բանից, թե զանգատվում են արդյոք նրանք վորեւ հիվանդությունից, թե հայտարարում, վոր միանգամայն առողջ են:

Քննությունը վերջացնելուց հետո զորակոչային հանձնաժողովի անդամները քննարկում են նրա արդյունքները, և հանձնաժողովի նախագահը տալիս է իր յեզրակացությունը զորակոչիկի՝ գինվորական ծառայության համար պիտանի լինելու կամ չլինելու մասին, կամ արձակուրդ է տալիս նրան բուժվելու համար:

Բայց հանձնաժողովը մեկ անգամ քննելուց հետո ամեն անգամ ել չի կարող վերջնական զնա-

հատական տալ զորակոչիկի առողջության մասին: Վորոշ դեպքերում պահանջվում է լրացուցիչ մասնագիտական քննություն կատարել կամ զորակոչիկին մի քանի որով պահել բուժֆիննարկում, մասնագիտական հսկողություն—«հետագոտելու» համար: Այդպիսի դեպքեր ամենից հաճախ պատահում են այն զորակոչիկների հետ, վորոշը ժամանակ չեն ունեցել, կամ չնայած մինչև զորակոչը կատարած բուժումներին, չեն կարողացել բուժել իրենց հիվանդությունը:

Զորակոչիկներն իրենց հետ պիտի ունենան տեղեկանքներ բուժման և կատարած անալիզների արդյունքների մասին: Այդ փաստաթղթերը զորակոչիկները պետք է ստացած լինեն բուժող բժիշկներից կամ բուժֆիննարկներից և հանձնաժողովի բժիշկներին ներկայացնեն մինչև բժշկական քննություն սկսելը:

Զորակոչիկի՝ մինչև զորակոչը բուժվելու մասին յեղած տեղեկությունները նշանակալի չափով թեթևացնում են բժիշկների աշխատանքը և ազատում զորակոչիկներին՝ լրացուցիչ հետագոտումներ ու փորձեր կատարելու վրա ժամանակ կորցնելուց:

Զորակոչի՝ կ. Յերե դու առաջուց բուժվել ես, չմոռանաս հետզ վերցնել յեզ հանձնաժողովի բժիշկներին ցույց տալ մի՞նչ զորակոչը քո բուժվելու, ինչպես նախկին ֆիննական բժշկական բնության արդյունքների վերաբերյալ տեղեկանքներն ու փաստաթղթերը:

ԲԱՇԽԱՐԽՆ ԸՍՏ ԶՈՐՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Կարմիր Բանակում ծառայելու համար պիտանի ճանաչված զորակոչիկները, հաճախ ցանկություն են հայտնում ծառայելու զորքի վորոշ տեսակի մասերում—մոտո-մեքենայացրած մասում, հեծելազորում, յերկաթուղայինում, նավատորմում և այլն: Սակայն վոչ ամեն զորակոչիկ իր առողջության հետևանքով կարող է նշանակվել զորքի այն տեսակում, վորը նա ցանկանում է:

Բանն այն է, վոր ռազմական աշխատանքը զորքի տարրեր տեսակներում տարրեր պահանջներ է առաջադրում առողջությանը: Այսպես, որինակ, մոտո-մեքենայացրած մասերում աշխատելու համար անհրաժեշտ է ունենալ լավ տեսողություն ու լսողություն և ամուր նյարդային սխտեմ: Ծովային նավատորմում աշխատե-

լու համար պետք է ունենալ առանձնապես ամուր
առողջութիւն, 160 սանտիմետրից վոչ պակաս
հասակ, լայն կրծքավանդակ:

Դրա համար ԲԳԿԲ ընդունված գորակոչիկներն
ըստ զորքի տեսակների բաշխելու ժամանակ ղե-
կավարվում են բժշկական քննութայն ար-
դյունքներով և ԲԳԿԲ զորքի բոլոր տեսակները
համալրելու անհրաժեշտությամբ:

ՀՈԳԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ՝ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՀԵՏՈ

Զորակոչիկները ղրկվորական ծառայության
համար պիտանի լինելը վերոշելուց հետո նրանց
թողնում են տուն զնալ իրենց անձնական և
ծառայության գործերը կարգավորելու: Այդ նպա-
տակի համար սովորաբար նրանց տրվում է մոտ
մեկ ամիս ժամանակ: Զորակոչիկներին ցույց է
տրվում հավաքակալան ներկայանալու ժամկե-
տը, վերադառնալու նրանք կազմակերպված ձևով կու-
ղարկվեն զորամասերը:

Այդ շրջանում, այսինքն մինչև զորամաս ու-
ղարկելը, զորակոչիկը պարտավոր է առանձին
խնամքով հոգ տանել իր առողջության մասին,

պարապել ֆիզիկուլտուրայով և ձեռք առնել բոլոր
միջոցները, վերադառնալու չհիվանդանա:

Հիվանդացած զորակոչիկն ուղարկվում է կզա-
գործմաս և չի կարող բոլորի հետ միասին անց-
նել մարտական ուսուցման, ռազմական տեխնի-
կայի յուրացման:

Նախ քան հավաքակալան ներկայանալը, զո-
րակոչիկը պետք է բազանիքում լավ լողանա սա-
պոնով, փոխի սպիտակեղենը և կարճ խուզի մա-
ղերը:

Զորամաս զնալու համար հավաքակալան մեկ-
նելիս իր հետ պետք է վերցնել հետեյալ ան-
հրաժեշտ իրերը՝ թեյաման, գլալ, դանակ, ձեռքի
սապոն, յերեսաբրիչ, ատամի խոզանակ, ատամի
փոշի, գավաթ (կրուժկա), պահետի սպիտակե-
ղեն (փոխնորդ), աղեալ և անկողնի այլ պարա-
զաներ:

Պետք է կարգի բերել հագուստը և իր հետ վերց-
նել բոլոր անհրաժեշտ պիտույքները՝ ճանապարհ-
հին հագուստի անհրաժեշտ մասեր վերանորոգում-
ներն անելու համար:

Հավաքակալանում անհրաժեշտ է պահպանել
կարգ ու մաքրութիւն, լինել կարգապահ և ճշ-
տությամբ կատարել հրամանատարութայն բոլոր
կարգադրութայնները:

ՀՈԳԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՃԱՆԱՊԱՐ ՀԻՆ

Զորամաս գնալու ժամանակ ևս անհրաժեշտ
է հոգ տանել իր առողջութեան մասին և որինա-
կելի մաքրութիւն պահպանել:

Այն վագոնը, վորով գնում են զորակոչիկները,
պետք է խնամքով ավել և հաճախ ուղափոխել,
չկեղտոտել, չթքել հատակին: Պետք է վորքան
կարելի յետ հաճախ թափ տալ անկողնի պարա-
զանները:

Ճանապարհին պետք է վորքան կարելի յետ հա-
ճախ լվանալ ձեռքերը սապոնով, հատկապես խը-
նամքով՝ ուտելուց առաջ:

Մի քանի կանգառներում զորամաս մեկնողներին
համար բաղանիք են կազմակերպում, փոխում են
սպիտակեղենը և ախտահանում (գեղինֆեկցիայի
յենթարկում) իրերը: Յուրաքանչյուր զորակոչիկ
այդ զեպքերում պետք է անպայման լողանա
բաղանիքում և ախտահանել տա իր բոլոր փա-
փուկ իրերը (հագուստ, սպիտակեղեն, յերեսաբը-
րիչ, աղեալ և անկողնի այլ պարագաներ):

Անձնական կեղտոտ սպիտակեղենը և հագուս-
տը պետք է առանձին պահել մաքուրից և զոր-
ժածութեան մեջ չեղածից:

Իր կաթսայիկն ու գալաթը պետք է փոփոխել
յետման ջրով՝ կերակուրն ընդունելուց առաջ,
իսկ ոգտագործելուց հետո՝ խնամքով լվանալ:

Ուտելու ժամանակ կերակրի մնացորդները հա-
տակին թափել ու շարտել չի կարելի, այլ պետք է
խնամքով հավաքել և լցնել հատուկ նշանակված
տեղը:

Մեծ կայաններում անպայման վերցնել յե-
ռացրած սառը ջրի պաշար: Չի կարելի ուտել
չլվացած մրգեր ու բանջարեղեններ, ուտելուց
առաջ պետք է անպայման յեռացրած ջուր լցնել
նրանց վրա:

Չի կարելի իր հետ վերցնել շուտ փչացող մը-
թերքներ, ինչպես, որինակ, յեփած միս, մսի
կարկանդակ, տապակած ձուկ և այլն:

Առհասարակ չի հանձնարարվում ճանապարհի
համար շատ մթերքներ գնել, վորովհետև զորա-
կոչիկներին ուղեկցող հրամանատարները նրանց
քափականաչափ տաք սնունդ են մատակարարում:
Իր մոտ ունեցած սննդամթերքները պետք է պահ-
պանել կեղտոտվելուց:

Ճանապարհին զորակոչիկը պետք է կուլտու-
րական ձևով անցկացնի իր ժամանակը՝ կարգա-
մասնակցի կազմակերպվող քաղաքացիներին, ու-



սոցիալական թիւերն իրարմէջ զփոխելով, շաշ-
կի, շախմատ, զոմինս խաղա, զիտի աշն տեղերի-
նոր սոցիալիստական շինարարութիւնը, վորտե-
ղով անցնում է նա:

Զորակոչի կ: Կարմիր Բանակն սպասում
է քեզ: Առողջ, առույգ յե՛վ խնդուք յամբ-
յե՛կ՝ փոխարինելու այն ընկերներին, վորոնք
արդեն յուրացել են ռազմական տեխնի-
կան, անցել են ռազմական ուսուցումը,
յերկարածամ արծակուրդ են գնում յե՛վ պա-
րտս են պատգապանելու իրենց մեծ սո-
ցիալիստական հայրենիքը:

ԻՆՁ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱ ԶՈՐԱԿՈՉԻԿԸ ԿԱՐՄԻՐ
ԲԱՆԱԿՈՒՄ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ
ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կարմիր բանակում մեծ աշխատանք է տարվում
մարտիկներին առողջութիւնը պահպանելու հա-
մար և բոլոր միջոցները ձեռք առնվում, վոր մար-
տիկները չհիվանդանան և վորքան կարելի յե-
տվելի լավ ամրացնեն իրենց առողջութիւնն ու
զարգացնեն իրենց ուժերը:

Զորամաս զաւուց հետո՝ կանչվածները տեղա-

վորվում են հատուկ շենքում: Այդ շենքում, վորը
կոչվում է սանիտարական ընդունարան, զորա-
կոչիկները մնում են 8—14 օր: Այդ ժամանակա-
միջոցում վորոշվում է, թե յեկածների մեջ չկան
արդյոք վարակիչ հիվանդութիւններով հիվան-
դացած մարդիկ:

Սանիտարական ընդունարանում բոլոր զորա-
կոչիկներին նորից քննում են բժիշկները, և այն-
տեղ գտնվելու ժամանակամիջոցում զորակոչիկ-
ները յերկու անգամ յենթարկվում են սանիտա-
րական մշակման, այսինքն խնամքով լողանում
են բաղանիքում և սափրվում: Այդ ժամանակ դե-
զինֆեկցիայի յեն յենթարկվում զորակոչիկների
սեփական իրերը:

Յերկրորդ սանիտարական մշակումից հետո,
զորակոչիկներին զինվորական զգեստ են տալիս,
և յեթե նրանց մեջ վարակիչ հիվանդներ չեն յե-
ղել, ուղարկվում են զորանոցները, վորտեղ է տե-
ղավորվում են: Այդ ժամանակվանից սկսվում է
նրանց զինվորական կյանքը զորամասում, նրանց
ռազմական ուսուցումը:

Սանիտարական ընդունարանում գտնվելու ժա-
մանակամիջոցում զորակոչիկներին նախապա-
հանական պատվաստումներ են անում ծաղիկ և
վորովայնատիֆի դեմ:

Զորակոչիկների առողջությունը պահպանելու վերաբերյալ այս բոլոր միջոցառումների նպատակն այն է, Վոր վարակիչ հիվանդությունները չտարվեն զորամասերը, և մասերի առնչակազմը պաշտպանվի այն վնասից, Վորը կարող է բերել թեկուզ մեկ վարակիչ հիվանդ զորակոչիկը: Այս բանը լավ պետք է հիշի յուրաքանչյուր զորակոչիկ:

Զորամաս գալուց հետո զորակոչիկը պետք է ողջի բժիշկներին՝ մարտիկներին առողջությունը պահպանելու վերաբերյալ աշխատանքներում, ախտիվորեն կատարի բժիշկների բոլոր ցուցումները, Վորոնք ուղղված են հոգուտ զորակոչիկների և ամբողջ կարմիր Բանակի:

Զորակոչիկ Գիտակցություն ու նշանակալի կառուցի բժիշկների համար ցուցումները առողջությունը պահպանելու վերաբերյալ, զարգացրու լեվ ամրապնդի՝ ուժերդ յեկ հարվածայնություն սովորի՝ ռազմական գործը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0220958

ԴԻՆԸ 25 ԿՈՊ.

27

41. 067

1941
1941

А. АККЕРМАН
**Красной Армии—
здоровых бойцов**
Гиз Арм. ССР, Ереван, 1938 г.